ՍԱՆԳԻԲԱՐԱՆ

Բժկերտից դէպի հիւսիս, երեք քառորդ ֆարսախ հեռու, մի ընդարձակ կանաչազարդ դաշտի վրայ փռուած է հայաբնակ Սանգիբարանը. սա իր դիրքով Փէրիա գաւառի ամենագեղեցիկ գիւղերից մէկն է, որ ունի խիստ բանաստեղծական տեսք և զարդարուած է ուռենիների, բարդիների ու կաղամախիների տնկարաններով, ծովանման կանաչ արտերով և արօտավայրերով, որոնք փռուած են նրա չորս կողմը։ Գիւղի արևմտեան կողմից բղխում է Կէօլի առուն. սա հարուստ է սառնորակ ջրով, որ անցնում է գիւղի միջով և ոռոգում նրա արտերը. իսկ գիւղի արևելեան կողմը գտնուող դեռից գոյանում է Մեծ առուն, որի ջուրը գործ են ածում ջրաղացների համար, ապա արտերն են ջրում։

Տեղացիները գաղթել են Հին—Զուղայի Աբցխա գիւղից 1606 թուին, Շահ-Աբբասի ձեռքով. նրանք բարձրահասակ են, բարի և հիւրասէր. այժմ բաղկացած են 225 տնից 1815 շնչով, որի 970-ը արական է, իսկ 845-ը իգական։ Պարապում են գլխաւորապէս հողագործութեամբ։

Հողի մի մասը եկեղեցական է և մի մասը սեփական.* Հայերից 100 տուն միայն հողատէր են, իսկ մնացեալները հողազուրկ, որոնք վարում են Նոր—Զուղայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու և նոյնպէս հողատէր գիւղացիների հողերը, որից ստացած բերքի $^1/_3$ մասը տալիս են նրանց, իսկ ամբողջ գիւղը պետական հարկ է վճարում 518 թուման, բացի այդ, հողազուրկները տարեկան տալիս են.

Մարդագլուխ	4 դրան.	Ոչխարին	10 շահի.
Կովին	2 »	Էշին	2 դրան։

Հողը մեծ մասամբ ջրովի է. ցանում են ամեն տեսակ հացահատիկներ և այլ ցանովի խոտեր։

Կրթական գործն այստեղ բաւական մխիթարական է. ունի «Պօղոս Անդրէասեան» միդասեան—երկսեռ դպրոցը

* Նոր—Զուղայի Գուսանաց Վանքն էլ հող ունի այս գիւղի Բառֆանքարում։